

## Հաշվետվություն

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-  
մարզային հողային պետական տեսչության 2013թ. տարեկան

ՀՀ Արագածոտնի մարզը զբաղեցնում է 275632,1 հա հողատարածք: Համայնքների վարչական սահմաններում գտնվող 275632.1 հա հողերից 69392.5 հա համարվում է քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն, 86831.8 հա պետական սեփականություն, 119403.1 հա հողերը համարվում են համայնքային սեփականության հողեր, այդ թվում 113222.5 հա գյուղատնտեսական նշանակության, 4301.3 հա բնակավայրի հողեր, 906.1 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, 116.5 հա էներգետիկայի տրանսպորտի կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր, 366.4 հա հատուկ պահպանվող հողեր, 490.3 հա ջրային ֆոնդի հողեր:

Բաժնի կողմից ըստ աշխատանքային ծրագրի 2013թ. ընթացքում կատարվել է՝

1. ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918 որոշման համաձայն բաժինը ձեռք է բերել մարզի՝ թվով 9 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների վերաբերյալ նյութեր, որոնք մշակվել և վերջնական տեսքով ներկայացվել է մարզպետին, այնուհետև ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: Որից 7-ը ստացել են ՀՀ կարավարության միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն և համայնքների ղեկավարների համապատասխան ավագանիների որոշումներ: Թվով 2 գործ գտնվում են ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի քննարկման փուլում:

2. ՀՀ կառավարության 30.09.2004թ. N 1572-ն որոշման պահանջների համաձայն բաժնի ուշադրության և հսկողության տակ է գտնվում պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերի օտարման և վարձակալության տրամադրման առավելագույն թափանցիկության և հրապարակայնության ապահովումը, մարզպետի գրությամբ հանձնարարվել է բոլոր համայնքների ղեկավարներին հողամասերի օտարումների և վարձակալությունների վերաբերյալ հրապարակվող հայտարարությունները փակցնել համայնքի հայտարարության ցուցատախտակների վրա:

3. Բաժնի կողմից աջակցություն է ցուցաբերվել համայնքներում մրցութային և աճուրդային հանձնաժողովների աշխատանքներին և վերահսկողություն է սահմանվել հատկացված հողամասերի նկատմամբ օրենքով սահմանված կարգով իրավունքների պետական գրանցումներ իրականացնելու համար:

4. Հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների կողմից իրականացված գործունեությունների վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ընթացիկ ստուգումներ մարզի 37 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ: ՀՀ Արագածոտնի մարզպետի 06.02.2013թ. թիվ 15-Ա կարգադրությամբ թվով 12 համայնքներում կատարվել են տեսչական ստուգումներ հողային հարաբերությունների բնագավառում և կազմվել են համապատասխան ակտեր:

Տեսչական ստուգումների արդյունքում մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 106-Ա, 107-Ա, 108-Ա, 109-Ա և 110-Ա, 111-Ա որոշումներով վարչական տույժի են ենթարկվել Ագարակ համայնքի ղեկավարը /100000 ՀՀ դրամ/, Կոշ համայնքի ղեկավարը՝ /150000 ՀՀ դրամ/, Սասունիկ համայնքի ղեկավարը՝ /150000 ՀՀ դրամ/, Ուջան համայնքի ղեկավարը՝ /150000 ՀՀ դրամ/ և Կարբի համայնքի ղեկավարը՝ /300000 և 150000 ՀՀ դրամ/:

5. ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման պահանջների համաձայն նոր հողային հաշվեկշիռը կազմելու համար անհրաժեշտ ձևերը տրամադրվել են բոլոր համայնքների ղեկավարներին և հանձնարարվել է համայնքի ղեկավարներին կազմել համայնքի հողային

հաշվեկշիռը, համաձայնեցնել ՀՀ ԿԱԱԳԿ Արագածոտնի մարզային ստորաբաժանման հետ և մինչև հուլիսի 10-ը ներկայացնել մարզպետարան՝ հողաշինության բաժին: Համայնքների կողմից ներկայացված հողային հաշվեկշիռը ամփոփվել է բաժնի կողմից, կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը և սահմանված ժամկետում ներկայացվել մարզպետին, այնուհետև ՀՀ կառավարության հաստատմանը, որը և հաստատվել է:

6. Համայնքների վարչական սահմաններում առկա է 48714.2 հա պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարբեր կատեգորիաների հողեր: Բաժնի կողմից տարվա ընթացքում կազմակերպվել և ապահովվել է համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ տրամադրելու գործընթացը: Հաշվետու ժամանակահատվածում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 36656.72 արոտավայրերից վարձակալության է տրամադրվել 6243 հա հողեր 7948650 դրամ տարեկան վարձավճարով:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդ-վաճառքով օտարվել է 114.4 հա հողեր, համայնքների բյուջե է մուտքագրվել 36526908 ՀՀ դրամ: Համայնքային սեփականության հողամասերից վարձակալության է տրամադրվել 249.425 հա հողամասեր 846130 ՀՀ դրամ վարձավճարով:

7. 2013թ. ընթացքում բաժինը քննարկել և պատասխանել է քաղաքացիների, կազմակերպությունների, մարզի համայնքներից և տարածքային ծառայություններից, նախարարություններից, կառավարությանն առընթեր գերատեսչություններից և դատարանի կողմից ստացված գրությունների և դիմում- բողոքների:

Հ/Հ	Մարզի ընդհանուր վարչական տարածք	275632,1 հա
1	Համայնքային սեփականության հողերից վարձակալության է տրամադրվել	249.425 հա
2	Վարձակալության համար գանձվել է	846130 ՀՀ դրամ
3	Համայնքային սեփականության հողերից աճուրդ վաճառքով օտարվել է	114.4 հա
4	Համայնքների բյուջե է մուտքագրվել օտարումից	36526908 ՀՀ դրամ
5	Պետական սեփականության հողերից վարձակալության է տրամադրվել	6243 հա
6	Պետական սեփականության հողերի վարձավճար է մուտքագրվել համայնքների բյուջե	7948650 ՀՀ դրամ

Հողաշինության և հողօգտագործման  
բաժին-մարզային հողային պետական  
տեսչության պետ

Գ.Օհանյան